

ԴԱՍ 8.

Մաքուր խիղճ

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 8.1. Ինչ է խիղճը, և ինչպես է այն գործում

ՄԱՍ 8.2. Աստծո սահմանները

ՄԱՍ 8.3. Ինչ է կատարվում վերստին ծննդի
ժամանակ

ՄԱՍ 8.4. Մեղավոր խղճի հետևանքները

ՄԱՍ 8.5. Ինչպես խիղճը պահել մաքուր

ՄԱՍ 8.6. Ծանրացած խիղճ

Կիրառություն

Ամփոփում

Աստվածաշնչյան ուսումնասիրություն

Նորոգված միտք

Նշումների
համար

Ներածություն

Որպես աշակերտ աճելու հաջորդ պայմանը *մաքուր խիղճն է*: Մաքուր խիղճը համոզվածություն և վստահություն է ապահովում Աստծո հետ մեր ունեցած փոխհարաբերության մեջ, երբ վկայում ենք ուրիշներին: Այն օգնում է հնազանդվել Աստծուն՝ Նրա հանդեպ ունեցած սիրուց: Պողոսի ծառայությունը զորավոր էր, քանի որ նա ջանասիրաբար ապրում էր Աստծո համար:

«Որ հենց սրա համար ինքս ջանք եմ անում, որ ամեն ժամ մաքուր խղճմբանք ունենամ Աստծո առաջին և մարդկանց առաջին» (Գ. Առ. 24:16)

Բանալի համարներ

Հռովմ. 2:15

Եբր. 9:14

Եբր. 10:22

Ա Տիմ. 1:19

Ա Տիմ. 1:15

Գ. Առ. 24:16

Նշումների
համար

ՄԱՍ 8.1

**Ինչ է խիղճը,
և ինչպես է այն գործում:**

Խիղճը ներքին մղում է, որը առաջնորդում է մեզ անել այն, ինչը *մտածում ենք*՝ ճիշտ է, և խուսափել նրանից, ինչը *մտածում ենք*՝ սխալ է: Այն ներքին *ձայն է*, որը վկայում է մեզ՝ մեղադրելով, եթե կարծում է՝ սխալ ենք, և արդարացնելով, եթե կարծում է՝ ճիշտ ենք (Հռովմ. 2:15): Այլ կերպ ասած՝ մեր խիղճը նման է զարթուցիչի, որը Աստված գործածում է մեզ արթնացնելու, երբ գտնվում ենք սխալ ընթացքի մեջ: Աստված այն գործածում է նաև մեզ քաջալերելու համար՝ տալով մեզ վստահություն մեր ճիշտ ընթացքի համար:

Մեր խիղճը չի պատճառաբանում, այն պարզապես մղում է մեզ անել այն, ինչը *զիտի*, որ ճիշտ է: Աստված մեզ տվել է խիղճը՝ Իրեն հնազանդվելու մեջ օգնելու համար:

Ամեն ոք ունի խիղճ, բայց երբ հարցը գնում է սխալի և ճշտի մասին, տարբեր խղճմտանքներ ի հայտ են գալիս տարբեր կարծիքներով: Երբեմն խղճի զանգը չի հնչում այնտեղ, որտեղ պետք է հնչեր, և երբեմն էլ սխալ ժամանակ է հնչում: Կատարյալ իրավիճակում խիղճը ծրագրված է ցույց տալու, թե որն է Աստծո կամքը մեր անելու կամ չանելու համար:

Նշումների
համար

ՄԱՍ 8.2 Աստծո սահմանները

Մարդը ստեղծվել է խղճով, բայց մինչ անկումը նրա խղճմտանքը հանգիստ էր, քանի որ մարդը մաքուր էր և չարի մասին գիտություն չուներ: Անկումից հետո նրա խղճմտանքը սկսեց գործել՝ մեղադրելով և հանդիմանելով իրեն: Որքան շատ է մարդը հասկանում Աստծո օրենքի մասին և մտերմանում Աստծո հետ, այնքան նրա խիղճը կարող է արդյունավետ գործել: Ինչևէ, անկում ապրած մարդու խիղճը չի կարող հետևել Աստծո կամքին: Մեր գիտակցությունը հասունանում է մեր աճին զուգընթաց: Ինչպես կերակրվում է մեր միտքը սխալի և ճշտի վերաբերյալ, այնպես էլ գործում է մեր խիղճը:

Նրանք, ովքեր տկար են հավատքի և խղճի մեջ, որպեսզի սխալների թույլ չտան և սահմանափակվեն իրենց գործողությունների մեջ, կարիք ունեն ներքին օրենքների: Երբեմն այդ սահմանները Աստծուց չեն, բայց նրանց զսպում և օգնում են սխալներ թույլ չտալու մեջ: Պողոսն ասում է մեզ, որ դուրս չգանք այդ սահմաններից, հատկապես, երբ ուրիշներն են հրում մեզ դուրս գալու, քանի որ, այսպես անելով, մեղք կգործենք (Հռովմ. 14:23):

Նրանք, ում խիղճը հաստատված է Աստծո Խոսքի վրա, իրենց զսպելու այդքան էլ կարիք չունեն, քանի որ նրանց խիղճը իրենց պահում է Աստծո սահմանների մեջ: Միտք օրենքը, ինչպես գրված է Հռովմ. 13:8–10–ում, այն չափանիշն է, որով ապրում է խիղճը: Սա հնազանդությամբ Աստծո հետ քայլելու մի մեծ ձգտում է: Նման խիղճը դառնում է Աստծո «ինդիկատորը»:

ՄԱՍ 8.3

Ինչ է կատարվում վերստին ծննդի ժամանակ

Նշումների համար

Վերստին ծննդի ժամանակ Սուրբ Հոգին գործածում է մեր խիղճը, որպեսզի զգանք մեր մեղավորությունը: Դա Նրա աշխատանքն է: Հանդիմանում է մեղքի համար, համոզում արդարության և դատաստանի համար (Հովհ. 16:8): Սուրբ Հոգին ցույց է տալիս մեզ Հիսուսին: Ավետարանը լուսավորում է մեր խղճմտանքը և նոր գիտակցություն տալիս մեղքի վերաբերյալ, որը մինչ այդ մեզ պարզ չի եղել:

Վերստին ծնվելուց հետո Սուրբ Հոգու միջոցով մենք սկսում ենք ճանաչել Աստծո ձայնը: Որքան շատ ենք թույլ տալիս Աստծո ճշմարտությանը գալ մեր կյանքի մեջ, այնքան ավելի է մեր խիղճը ճանաչում Աստծո ճանապարհները: Սա չի նշանակում, որ մենք ավելի մեղավոր ենք դառնում, այլ ավելի շատ կախվածություն ենք ունենում Աստծուց և Սուրբ Հոգու առաջնորդությունից: Մենք կարիք ունենք լցվելու Աստծո կամքի ճանաչողությամբ (Կող. 1:9–10):

Եթե սովորենք ապրել՝ հնազանդվելով Սուրբ Հոգուն, մեր խիղճն ավելի մաքուր և պարզ կդառնա:

«Որովհետև Տերն է Հոգին, որպես Տիրոջ Հոգին է, այնպես ազատություն է» (Բ Կորնթ. 3:17):

Նշումների
համար

ՄԱՍ 8.4

Մեղավոր խղճի հետևանքները

Մեր խիղճը շատ զգայուն *գործիք* է: Որոշ դեպքերում այն կարող է առաջացնել մեղավորության զգացողություն, որոշ դեպքերում էլ ոչ: Երբեմն էլ այն կարող է սխալ ահազանգել:

Կարող են լինել հետևյալ արձագանքները.

- **Կա մեղավորության զգացում՝ իրապես մեղավոր լինելով:**
Մեր խղճմտանքը մեղադրում է մեզ այն մեղքերի համար, որոնք կարիք ունեն լուծում ստանալու: Այս մեղքերից ապաշխարելով և խոստովանելով Աստծուն՝ մենք վերականգնվում ենք: Չեռք ենք բերում մաքուր խղճմտանք և վստահորեն կարող ենք մոտենալ Աստծուն:
- **Կա մեղավորության զգացում՝ մեղավոր չլինելով:**
Երբ մեր խղճմտանքը վարժեցվում է ոչ աստվածային ձևով, այն կարող է շարունակաբար մեզ սխալ մեղավորության զգացում փոխանցել, որը արգելք կհանդիսանա Աստծո սերն ընդունելու: Այսպիսի դեպքերում մեր խղճմտանքը շարունակում է մեղադրել մեզ, քանի որ մեզ սովորեցրել են, որ եթե մեղավոր ես, ուրեմն մեղավոր ես: Աստվածաշունչը այդ չի սովորեցնում:
- **Չկա մեղավորության զգացում, բայց մեղավոր է:**
Մենք մեղավորության զգացում չունենք, ինչպես իսկ չկա Աստծո հետ փոխհարաբերությունը: Մենք *պետք* է բաց և զգայուն լինենք Սուրբ Հոգու հանդիմանության առջև:
- **Չկա մեղավորության զգացում, և մեղավոր էլ չէ:**
Հիսուսի հետ ունեցած փոխհարաբերության միջոցով է հնարավոր ունենալ մաքուր խիղճ և մաքուր սիրտ (Գ. Առ. 24:16, Մատթ. 5:8): Եվ կատարյալ իրավիճակ է, երբ խղճմտանքը ներդաշնակ է Աստծո Խոսքի հետ, և մենք հնազանդվում ենք:


Քրիստոսում փրկությունը ազատում է մեզ դատապարտությունից (Հռովմ. 8:1):

«Էլ որքան ավելի Զրիստոսի արյունը, որ հավիրենական հոգով իր անչն անարար պատարագ մատուցեց Աստծուն» (Եբր. 9:14):

Եթե մեր խղճմտանքը մաքուր չէ, ապա միշտ կմնանք դատապարտության և մեղավորության մեջ, և այն կազդի:

- **Աստծո հետ ունեցած մեր փոխհարաբերության վրա:**
Մեղավորության զգացումը արգելք է Աստծո հետ փոխհարաբերվելու մեջ: Եթե Սուրբ Աստծո ներկայության մեջ մեզ անմաքուր ենք զգում, ապա չենք կարող նայել Աստծո աչքերին և խոսել համարձակորեն: Սա նաև կխանգարի ընդունել Աստծո սերն ամբողջությամբ: Եթե անհանգստացած ենք մեր խղճմտանքով, ապա անարժանության զգացում ենք ապրում:
- **Մեր հավատքի վրա:**
Ուժեղ հավատքը և մեղավոր խղճմտանքը իրար հետ չեն լինում (Հռովմ. 14:23):
- **Մեր աղոթքի կյանքի վրա:**
Եթե խղճմտանքը ցույց է տալիս մեր կյանքում եղած մեղքը, ապա Աստված փորձում է այն ուղղել, որ մեր խղճմտանքը կրկին մաքուր լինի:
- **Աստծո Խոսքի հանդեպ ունեցած մեր կարիքի վրա:**
Մեղավոր խղճմտանքը թալանում է Աստծո և Իր Խոսքի հանդեպ ունեցած մեր կարիքը:
- **Մեր վկայության վրա:**
Սատանան կփորձի համոզել մեզ, որ մենք կեղծավորներ ենք, և անմաքուր խղճով նրա դեմ պատասխան չենք ունենա:

**Նշումների
համար**



Նշումների
համար

ՄԱՍ 8.5

Ինչպես խիղճը մաքուր պահել

Խիղճը կարող է լինել մաքուր և ազատ մեղավորությունից: Քրիստոսի արյունը Աստծո կամքի համաձայն կարող է մաքրել քո բոլոր մեղքերը և խաղաղեցնել քո խիղճը: Սա աճման ընթացք է:

Օգտվիր Քրիստոսի մաքրման աշխատանքից, որտեղ այս չորս քայլերն անհրաժեշտ են.

1. Անհապաղ խոստովանի՛ր մեղքդ:

Արա՛ դա հենց այն պահին, երբ գիտակցես մեղքը (Ա Հովհ. 12:9): Մեղքը խավարեցնում է խղճմտանքն այնպես, որ չկարողանաս քո երկնային Հորը մոտենալ մաքուր սրտով և վստահ հոգով: Աղոթի՛ր ինչպես Հիսուսն է սովորեցնում՝ *ների՛ր մեր պարտքերը*: Այդպես դու կմնաս Աստծո հետ հաղորդակցության մեջ (Մատթ. 6:12):

2. Վստահի՛ր սրբացման խոստումին:

Աստված հավատարիմ է և արդար՝ ներելու քեզ և մաքրելու (Ա Հովհ. 1:9): Քո իրական խղճմտանքը մաքրված է Հիսուսի արյունով (Եբր. 9:14): Սա քեզ ամբողջապես կազատագրի մեղավորությունից: Ցանկացած մեղավորության զգացում չարից է: Մեկը, որ փորձում է մեղադրել քեզ, կարող էս մերժել դա և մի կողմ դնել, քանի որ այն Աստծուց չէ:

3. Վստահի՛ր Աստծո Խոսքին:

Դու կարիք ունես ավելին անել, քան միայն քո ձախողումները խոստովանել: Դու պետք է կանգնեցնես ձախողումը (Առակ. 28:13, Հակ. 1:22): Դու այնպես պետք է անես, ինչպես թելադրում է քո խղճմտանքը, երբ գիտես, որ դա Աստծո ճանապարհն է:

4. Շարունակի՛ր քայլել լույսի մեջ:

Սա նշանակում է շարունակել զգայուն լինել Սուրբ Հոգու նկատմամբ, և պատրաստ՝ անհապաղ հնազանդվելու, երբ Աստված իր կամքը հայտնի: Պողոսն ասել է, *որ հենց սրա համար ինքս ջանք եմ անում, որ ամեն ժամ մաքուր խղճմտանք ունենամ Աստծո և մարդկանց առջև* (Գ. Առ. 24:16): Մենք նույնը կարիք ունենք անելու:

ՄԱՍ 8.6 Ծանրացած խիղճ

Նշումների
համար

Մենք կարող ենք լռեցնել մեր խղճմտանքը՝ մերժելով նրան և չհնազանդվելով նրա ասածին: Այսպես վարվելով՝ մեր կյանքի վրա ծանրություն կդնենք: Միգուցե որոշ ժամանակ կարողանանք թաղել այդ ծանրությունը, բայց վերջիվերջո այն կարտահայտվի ինչ-որ խնդրի տեսքով:

Եթե անձը կամավոր կերպով մերժում է իր խղճմտանքին, այն կծանրանա և կդադարի խոսել: Սա նկատի ունեն Պողոսը, երբ ասում էր *փառված* խղճմտանք (Ա Տիմ. 4:2): Այդ վիճակում մնալը վտանգավոր է. այն կարող է տանել հավիտենական կործանման: Դա նման է վնասվածք կրելուն և ցավը չզգալուն: Եթե մենք ուշադրություն չդարձնենք զգուշացմանը, կարող ենք լուրջ վնասներ կրել:

Խղճմտանքը ամենաարդյունավետ միջոցներից մեկն է, որը տվել է Աստված՝ Իր հետ ճիշտ փոխհարաբերության մեջ ապրելու համար: Եղի՛ր պատրաստ և լսի՛ր խղճիդ ձայնին:

Նշումների
համար

Կիրառություն

Հետևյալ կետերը ուղղություն են տալիս, թե ինչպես սովորել ապրել՝ հնազանդվելով խղճի ձայնին:

I) Երբ խղճմտանքը գործում է մինչև մեր որոշելը կամ անելը

ա) Խիղճը չի անհանգստացնում քեզ: Խաղաղություն ունես քո որոշելուց կամ անելուց առաջ: Վստահությամբ արա՛ այն:

բ) Խիղճը անհանգստացնում է քեզ, և դու խաղաղություն չունես: Մի՛ արա: Եթե առաջ գնաս, քո արածը հավատփից չի լինի, իսկ դա, հետևաբար, մեղք է (Հռովմ. 14:23):

Լսի՛ր քո խղճի ձայնը, երբ խոսում է քեզ հետ: Քայլի՛ր *Տիրոջ երկյուղի մեջ* (Մաղմ. 111:10), և ամեն ինչ արա՛, ինչպես *Տիրոջ համար* կանեիր (Հռովմ. 14:1–12): Մի՛ արա նրա համար, որ այդպես է *ընդունված*, կամ էլ վախենում ես մյուսներից: Թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին նորոգի քո խղճմտանքը:

II) Երբ խղճմտանքը գործում է որոշում կայացնելուց կամ անելուց հետո

ա) Խիղճը չի անհանգստացնում: Խաղաղություն ունես այն կայացրածդ որոշման կամ արածիդ համար: Շնորհակալություն Աստծուն սրա համար, այն կտա քեզ ուրախություն և կգորացնի քեզ:

բ) Խիղճը անհանգստացնում է քեզ: Խաղաղություն չունես կայացրածդ որոշման կամ արածիդ համար: Անհնազանդությանդ համար խոստովանի՛ր Աստծուն և խնդրի՛ր Նրա ներումը: Շնորհակալություն հայտնի՛ր այն փաստի համար, որ ներված և մաքրված ես Հիսուս Քրիստոսի արյունով: Եթե Սատանան շարունակի մեղադրել քեզ, մերժի՛ր նրան՝ հիմնվելով Աստծո խոստումների վրա:

III) Խղճի վերականգնում

Աստծո ցանկությունն է վարժեցնել մեր խիղճն այնպես, որ այն գործի համապատասխան Նրա կամքին: Մա ամենօրյա վարժանք է (Գ. Առ. 24:16):

ա) Դրան կարելի է հասնել.

- Իր Խոսքով:
- Սուրբ Հոգու հանդիմանությամբ:
- Շարունակական աղոթքից հետո խաղաղություն ունենալով:
- Վերականգնված խղճի համաձայն գործելով (Հակոբ. 4:17):

բ) Այն չենք կարող ձեռք բերել:

- Վախով կամ հարկադրանքով:
- Խիղճը ճնշելով:


IV) Մեր դիրքը մյուս հավատացյալների նկատմամբ

ա) *Մշակութային* նորմեր

Կարևոր է հիշել, որ այն, ինչը մենք համարում ենք ճիշտ վարք, միգուցե նույնը չլինի մյուս հավատացյալների համար: Օրինակ՝ կարող են մշակութային կամ վարվելաձևի տարբերություններ լինել: Աստվածաշունչը սովորեցնում է, որ մյուս հավատացյալներին պետք է թույլ տալ խղճմտանքի ազատություն այս նորմերին համապատասխան, որպեսզի չվիրավորենք նրանց և չձանրացնենք նրանց խիղճը (Հռովմ. 14:23, Ա Կորնթ. 8, 9:19–23):

Մակայն սա չի վերաբերում այն դեպքերին, երբ այս նորմերը կամ սովորույթները ոտնահարում են հոգևոր արժեքները, որը աղավաղում է խաչի միջոցով Աստվածային շնորհի գործությունը: Պողոսը խիստ զգուշացնում է սրա համար, քանի որ այն տանում է օրինապաշտ ապրելակերպի, որտեղ մշակույթն ու սովորույթները ունենում են կռապաշտական արժեքներ (Գաղ. 2:11–14, 4:3, 8–11, Ա Տիմ. 4:1–5, Եբր.13:9):

*Նշումների
համար*



**Նշումների
համար**

բ) Քարոյական նորմեր

Նորահավատներին պետք է սովորեցնել Աստծո քարոյական նորմերը:

Որպես Քրիստոնյաներ՝ բոլորին պետք է կառուցենք և հորդորենք սիրո մեջ, որպեսզի մեր խիղճը սկսի գործել քարոյական նորմերին համապատասխան (Բ Կորնթ. 7:1, 13:11, Ա Թեա. 5:11):

Ամփոփում

1. Մեր խիղճը Աստծո զարթուցիչն է, և կարիք ունենք թույլ տալ Աստծուն, որ ճիշտ ծրագրավորի այն, որպեսզի մեզ արթնացնի Իր ձևով:
2. Խիղճն արհամարհելը այնքան վնասակար է, որքան ցավն արհամարհելը: Այն սովորաբար տանում է մեծ կորստի:
3. Աստծո կողմից մեր ներված լինելու համոզվածությունը մաքրում է մեր խղճմտանքը և ազատում մեզ մեղավորության զգացումից:

Մաքուր խղճմտանքով ապրելու համար կարևոր դեր է խաղում միտքը: Խղճի գործելակերպն այնպիսին է, որ մեծ բան է կախված այն ինֆորմացիայից, որն ամեն օր ստանում ենք մեր մտքից: Այս մասին ավելի մանրամասն կուսումնասիրենք *Նորոգված միտք* աստվածաշնչյան ուսուցման մեջ:

Աստվածաշնչյան ուսումնասիրություն Նորոգված միտք

Նշումների
համար

Ըստ բառարանի՝ միտքն այն է, «որը մտածում, հասկանում, զգում և կամենում է»: Մտածելու ունակությունը Աստծուց է տրված: Միտքը ինքն իրեն չի գործում: Մտածելն ու հասկանալը ցույց են տալիս, որ միտքը ներգործվում է այն ինֆորմացիայից, ինչով կերակրվում է: Այդ ինֆորմացիան կարող է կարծիք ստեղծել, ազդել մեր զգացմունքների վրա, նաև ղեկավարել մեր գործողությունները: Սրանից հետևում է, որ որքան լավ ինֆորմացիա ընդունվի, այնքան միտքը լավ վիճակում կլինի: Դժբախտաբար մեր միտքը (հետևաբար նաև խղճմտանքը) հաճախ ուժգնությամբ ներազդվում է աշխարհի սկզբունքներից, և աշխարհի ոգին ավելի մեծ ազդեցություն է ունենում, քան Աստծո Հոգին:

Մա ցույց է տալիս, թե որքան կարևոր է թույլ տալ Սուրբ Հոգուն լինելու մեր Ուսուցիչը, ղեկավարել մեր միտքը ամեն մի պարագայում: Այս ուսուցումը կօգնի մեզ հայտնաբերել, թե ինչպես կարող ենք նորոգել մեր միտքը:

Այս ուսուցումն ավարտելուց հետո դուք ընդունակ կլինեք.

- Նշել բնական և նորոգված մտքերի միջև եղած տարբերությունները:
- Բացատրել, թե ինչ է նշանակում Բրիստոսի միտքն ունենալ:
- Ցույց տալ, թե այս մտքի նորոգությունը ինչպես է տեղի ունենում:

1. Հունարեն *ֆրոնես* բառը Նոր Կտակարանում մեզ հանդիպում է շատ անգամ և հաճախ բարգմանվում է *միտքով*, *հասկացողությամբ*, *խորհելով*, *հերքողությամբ*:

Այս բառը հանդիպում է Հռովմ. 8:5-ում, որտեղ Պողոսը բացատրում է մարմնավոր և հոգևոր միտք ունենալու պատճառը: Երբ մտքերդ հիմնված են աշխարհիկ կամ մարմնավոր ինֆորմացիայի վրա, ապա դու մարմնավոր մտածելակերպ ունես: Այն սնվում է մարմնական ցանկություններով և հետաքրքրություններով:

Նշումների համար

Կարդա՛ Հռովմ. 8:5-8-ը և լրացրո՛ւ.

«Որովհետև _____
լինողները _____ են մտածում,
իսկ _____ լինողները՝
_____ բաները:

Որովհետև մարմնի խորհուրդը _____ է,
և հոգու խորհուրդը՝ _____:

Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ _____
_____ է, որովհետև _____

չի հնազանդվում, և կարող էլ չէ:

Եվ նրանք, որ _____ են, չեն
կարող Աստծուն հաճո լինել»:

2. Եթե թույլ տանք, որ մեր միտքը կերակրվի աշխարհի մեղավոր սկզբունքներով, այն կիշխի մեր ամբողջ անձի վրա: Հետևյալ համարները բացատրում են աշխարհիկ մտածելակերպի բնույթը:

Համապատասխանեցրո՛ւ նկարագրությունները հետևյալ համարների հետ.

- | | | |
|-----------------------------|--|-----------------------|
| ա) <input type="checkbox"/> | Մատնված, անարգված | 1) Բ Կորնթ. 3:14, 4:4 |
| բ) <input type="checkbox"/> | Աստծո բաները հիմարություն է համարում | 2) Հռովմ. 1:28 |
| գ) <input type="checkbox"/> | Կուրացած է, փակ է Ավետարանի լույսի համար | 3) Եփես. 2:3 |
| դ) <input type="checkbox"/> | Ապականված, հեռացած, մոլորված | 4) Հռովմ. 8:7 |
| ե) <input type="checkbox"/> | Աստծո դեմ թշնամացած | 5) Եփես. 4:17,18 |
| զ) <input type="checkbox"/> | Մեղավոր բնության փափագները իրականացնող | 6) Ա Տիմ. 6:5 |
| է) <input type="checkbox"/> | Ունայն և խավարած | 7) Ա Կորնթ. 2:14 |

3. Մարմնավոր միտքը ավելի վնասվում է ինֆորմացիայի պատճառով: Նշի՛ր մի քանի աղբյուրներ, որոնք կարող են վնասել քո մտածելակերպը.

4. Միտքը գործում է հետևյալ կերպ.


- Ընդունում է ինֆորմացիան:
- Ստացած ինֆորմացիան անալիզի է ենթարկում:
- Ինֆորմացիան մտապահում է:
- Արձագանքում է զգացմունքորեն:
- Ընտրում է՝ ինչ է ուզում և ինչ չի ուզում:
- Ակտիվացնում է կամքը և դրսևորվում:

Միտքը գործածելով մտածելը պարտավորված գործողություն չէ: Ինչպես մտածում ենք, այդպես էլ ապրում ենք: Վերևում նշվածներից որո՞նք են մտքի երկու ֆունկցիաները, որ որոշում են քո վարվեցողությունը.


5. Այն ինֆորմացիան, որն ընդունում ենք մեր մտքի մեջ, կդրսևորվի մեր վարմունքում: Սա ներկայացվում է Հռովմ. 8:5–8–ում: Լրացրո՛ւ բաց թողնված տեղերը.

- Մարմնավոր լինողները _____ են մտածում, և մարմնի խորհուրդն է՝ _____:
- Հոգևոր լինողները _____ են մտածում, և հոգու խորհուրդն է՝ _____:

*Նշումների
համար*



**Նշումների
համար**



6. Նույն ձևով **նորոգված հոգևոր միտքը** (Հոգու միտքը) կվերահսկի մեր անձերը Սուրբ Հոգու առաջնորդությամբ, երբ մեր միտքը կերակրվի Աստծո խոսքով: Հոգևոր նորոգված մտքի բնութագիրը նշված է ներքևում բերված համարներում: Համապատասխանեցրո՛ւ բնութագրերը, որոնք տրված են հետևյալ համարներում:

- ա) Ուշադիր է Քրիստոսի խոսքերի վրա: 1) Կորնու. 3:2
- բ) Ուշադիր է Հոգու պտուղներին: 2) Բ Կորնթ. 10: 5
- գ) Գոտեպնդված է գործելու համար: 3) Ա Պետ. 1:13
- դ) Տեղյակ է սխալ մտքերի հարձակման մասին: 4) Փիլիպ. 4:8, 9

7. Ինչպես նալն առանց կողմնացույցի կմոլորվի, նույնպես և միտքը. կյանքը ճիշտ ուղղությամբ ուղղորդելու համար մեր միտքը կարիք ունի կողմնացույցի: Բ Կորնթ. 10:5–ում Պողոսը նկարագրում է այն մեթոդը, որ Կորնթոսի եկեղեցին պետք է կիրառի մտքի նորոգության համար:

- «Եվ ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիրություն դև»:
- «Ամեն միտք գերի ենք վերցնում՝ հնազանդեցնելով Քրիստոսին»:

Առաջին մեթոդը պաշտպանողական է, երկրորդը՝ հարձակողական: Որպեսզի նորոգենք կամ էլ մաքուր պահենք մեր մտքերը, պետք է գործածենք նույն մեթոդը: Երբ անմաքուր կամ Քրիստոսին անարգող մտքեր են բարձրանում, ի՞նչ գործողություն կանելիք:

Տե՛ս հետևյալ հնարավորությունները.

- ա) Շարունակում ես մտածել դրանց շուրջ:
- բ) Մերժում ես այդ մտքերը Հիսուսի անունով:
- գ) Ընդունում ես մտքերն այնպես, ինչպես քո վնասված կամքն է քույլ տալիս:
- դ) Խնդրում ես Սուրբ Հոգուն դեկավարել քո մտքերը:


Այս հնարավորություններից ո՞րը կգործածեիր քո միտքը նորոգելու համար: Ընդգծի՛ր ճիշտ պատասխան(ներ)ը:

- 8. Կարո՞ղ ես մտաբերել մի օրինակ, որտեղ գործածել ես հետևյալը.
 - Մերժել ես սխալ մտքերը:

- Գերի ես վերցրել բոլոր այն մտքերը, որոնք Աստծուն և Նրա Խոսքին հակառակ են՝ հնազանդեցնելով դրանք Քրիստոսին.

- 9. Ի՞նչ ասաց Պողոսը, թե բոլոր քրիստոնյաները ստացել են: (Ա Կորնթ. 2:16)

որպեսզի ամեն օր փորձառաբար ունենանք *Քրիստոսի միտքը*, կախված է նրանից, թե անձնապես որքան ենք ճանաչում Քրիստոսին: Ինչպե՞ս կարող ենք ճանաչել Հիսուսին ավելին:



**Նշումների
համար**

10. Ինչպիսի՞ քայլեր կուզեիր ձեռնարկել միտքդ նորոգելու համար: Կարդա՛ ներքևում տրված խորհուրդները և նշի՛ր մեկը, որը կուզեիր իրականացնել.


- Մերժի՛ր սխալ մտքերը Հիսուսի անունով:
- Մի՛ նայի՛ր վատ հեռուստաձրագրեր:
- Մի՛ բամբասիր:
- Դադարեցրո՛ւ վատ սովորությունները:
- Վատ թերթեր մի՛ կարդա:
- Մերժի՛ր Սատանայի փորձությունը՝ գործածելով Աստծո ուսը:
- Կարդա՛ և մտապահի՛ր Աստծո Խոսքը:
- Խնդրի՛ր աստվածային պաշտպանություն:
- Վարժեցրո՛ւ քեզ Կողոս. 3:1–3–ին (տե՛ս նաև ԴԱՍ 5–ը):
- Աղոթի՛ր Սուրբ Հոգու առաջնորդության համար:
- Հավատա՛, որ ստացել ես Քրիստոսի միտքը:

11. Մեր մտքի նորոգությունը երկարատև ընթացք է, որին պետք է հասնենք Աստծո օգնությամբ: Վերստին ծնունդով Աստված մեզ հոգևորապես մտածելու պոտենցիալ է տալիս: Նորոգված միտքը հաշվի է առնում Աստծո գորությունն ու հնարավորությունները: Սա է, որ Աստվածաշունչը անվանում է **իմաստություն**: Առակ. 3:5–7–ում տեսնում ենք հինգ խորհուրդ, որոնք կարևոր են Աստծո իմաստությունը ստանալու համար: Գրի՛ր դրանք.

- ա) _____
- բ) _____
- գ) _____
- դ) _____
- ե) _____

12. Այս ուսուցման սկզբում սովորեցինք, որ այն ինֆորմացիան, որով լցնում ենք մեր միտքը, դրսևորվում է մեր վարվեցողության մեջ: Երբ կերակրվում ենք Աստծո Խոսքով, մեր միտքը նորոգվում է: Նորոգված միտքը կփոխի մեր ամբողջ կյանքը: **Ո՞րն է նորոգված մտքի պատույր:** Առակ. 3:13,14, և Հռովմ. 12:2
-
-
-

*Նշումների
համար*



Նշումների
համար

Պատասխաններ

1. Մարմնավոր, մարմնի բաները, հոգևոր, հոգու, մահ, կյանք և խաղաղություն, քշնամություն, Աստծո օրենքին, մարմնով:
2. ա) բ) գ) դ)
 ե) վ) է)
3. Օրինակ՝ կրթությունը, հեռուստացույցը, ընկերները, գրքերը և այլն:
4.
 - Ընդունում է ինֆորմացիան:
 - Ընտրում է՝ ինչ է ուզում և ինչ չի ուզում:
5.
 - Մարմնի բաները, մահ:
 - Հոգու բաները, կյանք և խաղաղություն:
6. ա) բ) գ) դ)
7. բ) և դ)
8. Անձնական նկատառումներ:
9. Քրիստոսի միտքը:

 Օրինակ՝ աղոթքը, խորհելը, հանձնվելը, երգելը, Խոսքը կարդալը և այլն:
10. Անձնական նկատառումներ:
11. ա) Վստահի՛ր Աստծուն քո ամբողջ սրտով:
 բ) Մի՛ վստահիր քո հասկացողությանը:
 գ) Ամեն ինչում Տիրո՛ջը վստահիր:
 դ) Քո աչքին իմաստուն մի՛ եղիր:
 է) Տիրոջից վախեցի՛ր և հեռացի՛ր չարից:
12. Աստծո միտքն ու իմաստությունն ընդունող մարդը օրինվում է: Ընդունակ լինենք և իմանանք, թե որն է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը: Մա մեզ տալիս է վստահու-թյուն և հետ կպահի սխալ ճանապարհով ընթանալուց: